Լ. Միրիջանյանի անվան հ. 155 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Խոսք և հաղորդակցություն» ժամերը մայրենիի դասընթացում

Ուսուցիչ՝ Համբարյան Աիդա

Ղեկավար՝ Միրզոյան Թամարա

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3

ԳԼՈՒԽ 1. Խոսքի և հաղորդակցման դերը կրտսեր դպրոցականի զարգացման գործընթացում---------- 5

ԳԼՈՒԽ 2. Մայրենի լեզվի դասընթացում խոսքի և հաղորդակցման միջոցների կիրառման առանձնահատկությունները---------- 10

Եզրակացություն----------15

Օգտագործված գրականության ցանկ----------16

Ներածություն

Խոսքը և հաղորդակցումն անհրաժեշտ են մարդկանց հետ շփվելու, հարաբերություններ ստեղծելու և դրանք զարգացնելու համար: Երեխայի զարգացումը սկսվում է ընտանիքից, սակայն այդ զարգացման ճիշտ ուղին հարթվում է դպրոցում՝ դեռ տարրական դասարաններից սկսած: Խոսքն ու հաղորդակցումը հնարավորություն են տալիս ավելի հեշտ ինտեգրվել շրջապատին, կարողանալ շփվել հասակակիցների հետ, ձեռք բերել գիտելիքներ և դրանք կիրառել կյանքում: Այս հատկանիշները մասնավորապես ավելի հեշտ է ձեռք բերել հենց Մայրենի լեզվի դասերի ընթացքում:

«Մայրենի» առարկայի նպատակն առաջին հերթին աշակերտների խոսքի և մտածողության զարգացումն է, լեզվի հաղորդակցական գործառույթի իրականացումը: Կապակցված խոսքի հմտությունների ձևավորումը, բառապաշարի հարստացումն աշակերտների խոսքի լեզվական–քերականական կառուցվածքի մշակումը պետք է ծառայեն այս գլխավոր նպատակին՝ մայրենիով գրագետ և արդյունավետ հաղորդակցվելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Յուրաքանչյուր երեխայի ճիշտ կրթության հիմքը հենց մայրենի լեզվի յուրացումն է, դրա միջոցով ճիշտ հաղորդակցվելու հմտությունների ձեռքբերումը:

Ուսումնասիրության առարկան և նպատակը: Մեր ուսումնասիրության առարկան է «Խոսք և հաղորդակցություն» ժամերը մայրենիի դասընթացում, նպատակն է ցույց տալ այն առանձնահատկությունները, որոնք ուսուցիչը պետք է հաշվի առնի Մայրենի լեզվի ժամերին և կարողանալ այդ դասերի միջոցով ընդգծել խոսքի և հաղորդակցման կարևորությունը:

Հետազոտության խնդիրները: Պետք է վեր հանել այն խնդիրները, որոնց կարող են առնչվել և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները Մայրենի լեզվի ժամերին, ինչպես նաև շեշտադրել այն կարևոր դրույթները, որոնք առկա են խոսքի և հաղորդակցության ձևավորման մեջ:

Արդիականությունը: Կրտսեր դպրոցականի դաստիարակության առաջնային առանձնահատկությունը ճիշտ և գրագետ խոսքի ձևավորումն է, հաղորդակցման հմտությունների ձեռքբերումը և դրանց նպատակային կիրառումը: Վերը նշվածն աշակերտներին ուսուցանում է հենց ուսուցիչը և մասնավորապես Մայրենի լեզվի ժամերին: Լեզվի ճիշտ կիրառումը և դրա միջոցով դասընկերների հետ հաղորդակցումը մեծ նշանակություն ունեն երեխայի գաղափարապես զարգացման գործընթացում, ուստի այս թեման շարունակում է արդիական մնալ և լինել կրթական գործընթացի մի մասը: Այն կիրառելի պետք է լինի բոլորի կողմից, որն էլ կարող է բերել համընդհանուր կրթական մակարդակի բարձրացման:

Մեր հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. Խոսքի և հաղորդակցման դերը կրտսեր դպրոցականի զարգացման գործընթացում

Դեռ հին ժամանակներից մարդկային հասարակության մեջ շփումն ու հաղորդակցումը կարևոր տեղ են զբաղեցրել: Միմյանց հետ հաղորդակցվելը, կարծիք արտահայտելը, հասարակության մեջ ինտեգրվելը հենց կատարվում է խոսքի և շփման միջոցով: Երեխայի խոսքն ի սկզբանե զարգանում է ընտանիքում, բայց այն առավել կատարելագործվում է հենց դպրոց հաճախելուց սկսած: Տարրական դասարաններում պետք է խոսքի և հաղորդակցության ճիշտ հիմքը դրվի, քանզի հետագայում դա է հարթելու տվյալ մարդու համար կյանքի ճիշտ ճանապարհ:

Կրթության լեզուն իմացության, ճանաչողության հիմքն է, հետևաբար բոլոր ուսումնական առարկաները յուրացվում են կրթության, դասավանդման լեզվի միջնորդությամբ: Մյուս կողմից՝ ուսումնական բոլոր առարկաներն էլ իրենց լուման ունեն սովորողների լեզվական իրազեկությունների զարգացման գործում, քանի որ բոլորն էլ կրթության լեզուն օգտագործում են գիտելիքները յուրացնելու և ներկայացնելու համար: Ուսումնառության, ուսուցչի և գրքի հետ հաղորդակցության ընթացքում սովորողը յուրացնում է բոլոր մյուս ուսումնական առարկաները[1]:

Հայերենի ուսուցման հիմնախնդիրները կարող են և պետք է դիտարկվեն երկու տեսանկյունից՝ որպես ուսումնական առարկա և որպես կրթության լեզու: Մայրենի լեզու առարկայի ուսուցանումը հենց այն ճիշտ սկիզբն է, որով պետք է սկսվի դպրոցում երեխայի կրթությունը:

Կրտսեր դպրոցի խնդիրն է դառնում օգնել երեխային գրավոր և բանավոր խոսքը ճիշտ ձևակերպել, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքները ու հաղորդակցվել: Մայրենի լեզվի ուսուցումը՝ որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է

[1] ՀՀ լեզվակրթության քաղաքականության ուրվագիծ…, 2008, էջ 48-49

սովորողի ամենօրյա գործունեության հետ: Այն պետք է նպաստի սովորողի՝ բնականոն, անկաշկանդ, ստեղծագործող, տրամաբանող, ազատ արժեհամակարգի ձևավորմանը:

Մայրենի լեզուն ուղղված է՝

. սովորողի ինքնաարտահայտմանը, ինքնադրսևորմանը.

. սեփական միտքը բանավոր և գրավոր ձևակերպելուն և արտահայտելուն.

. սովորողի ստեղծագործական մտքի զարգացմանը:

Լեզուն ունի իր որոշակի տրամաբանությունը: Այն արտացոլում է մարդու մտածողությունը, այլ կերպ ասած՝ մտածելակերպը: Լեզվի կատարելագործման վիճակից շատ մեծ չափով կախված է այն, թե ինչպես է մարդը մտածում և գործում: Լեզվի՝ հատկապես մայրենի լեզվի, ինչպես և նրա առանձին դրսևորումների՝ խոսքի, լավ տիրապետումն ու կատարելագործումն էական նշանակություն ունեն սերունդների դաստիարակության, նրանց մտածողության զարգացման համար: Այնպես որ, դա ունի նաև գործնական մեծ նշանակություն: Հենց այս տեսակետից էլ ուսուցիչը պետք է միշտ հոգատար լինի լեզվի ճիշտ զարգացման հանդեպ և ավելի ու ավելի ձգտի նրա կատարելագործմանն ու այն ճիշտ ձևով փոխանցի իր աշակերտներին:

Բացի տեսականորեն խոսելուց և բացատրելուց, ուսուցիչը պետք է ընդգծի գործնականում այդ գիտելիքները կիրառելու կարևորությունը: Օրինակ՝ դասարանին բաժանի խմբերի, նրանցից յուրաքանչյուրին հատկացնի տարբեր երևույթներ ներկայացնող պատկերներ (կենդանիներ, բույսեր, գյուղ, ծով և այլն) և թիմերին հանձնարարի քննարկել տվյալ պատկերը և թիմի ավագի միջոցով ներկայացնել այն: Մրցակից թիմերը տվյալ թիմի ներկայացրածի հիման վրա պետք է գուշակեն պատկերված նկարը, նրանք իրավունք կունենան նաև հարցեր տալու: Առաջադրանքի վերջում ուսուցիչն ամենից արագ կողմնորոշվող թիմին խրախուսական նվերներ կտա և դրանով կմոտիվացնի դասարանի մնացած աշակերտներին, որ հաջորդ առաջադրանքի ժամանակ ավելի ուշադիր լինեն և արագ կողմնորոշվեն: Այս մեթոդի միջոցով կզարգանա աշակերտի մտածելու ունակությունը, երևակայական միտքը, տեսածը

վերարտադրելու կարողությունը և ստեղծագործական հմտությունները: Նրանք ինտերակտիվ շփման մեջ կլինեն և՛ ուսուցչի, և՛ դասարանի աշակերտների հետ, նոր բառեր կսովորեն, ավելի անկաշկանդ և ինքնավստահ կդառնան:

Դպրոցում սեփական կարծիքի արտահայտումը, ուսուցչի հետ շփումը, միջավայրին հարմարեցումը կատարվում է հենց հաղորդակցման շնորհիվ: Հաղորդակցության արդյունավետության ապահովման գործում կարևոր նշանակություն ունի նաև հաղորդակցման ոճը: Հաղորդակցման ոճը մարդու վարքագծի անհատական կայուն ձևն է, որը դրսևորվում է փոխգործունեության բոլոր պայմաններում՝ անձնական հարաբերություններում, սոցիալական դերերի իրականացման ընթացքում[2]:

Միայն ֆիզիկական ու մտավոր կարողությունները բավական չեն հաղորդակցման համար: Անհրաժեշտ է, որ երեխան ունենա հաղորդակցական պատրաստվածություն, այսինքն՝ տիրապետի հաղորդակցման անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների, ունենա հաղորդակցական ունակություններ և կարողանա հաղթահարել միջանձնային հաղորդակցման խոչընդոտները: Հաճախ երեխան, նախադպրոցական տարիքում չունենալով հաղորդակցական ունակություններ, դպրոցում պարզապես չի կարողանում ինքնադրսևվորվել: Այս տեսանկյունից հաղորդակցական ակտիվության խթանման գործընթացում կարևոր նշանակություն ունի հաղորդակցական խոչընդոտների հաղթահարումը: Նշված խոչընդոտները կարելի է հաղթահարել միայն և միայն ուսուցչի ճիշտ մեթոդով դասերն անցկացնելու միջոցով: Դասարանում ստեղծել անկաշկանդ մթնոլորտ, աշակերտներին սովորեցնել հարգել միմյանց, պահպանել ճիշտ վարքագծի կանոնները, չվախենալ սեփական կարծիքն արտահայտելուց և հետևել ուսուցչի տված ցուցումներին: Ինքնամփոփ, լռակյաց և չշփվող աշակերտներին պետք է առանձնահատուկ վերաբերմունք ցույց տալ, նրանց հետ զրույցներ տանել նաև դասաժամերից դուրս, փորձել բացել նրանց խոսքը, նրանց ներգրավել

[2] Կարապետյան Վ.Ս. Գեվորգյան Մ.Ռ. Բերբերյան Ա.Ս. Պետրոսյա Ռ.Ս. Խաչատրյան Հ.Վ. «Կրթության հոգեբանության դասախոսությունների ժողովածու», էջ296-338

դասապրոցեսի մեջ, հարցնել նրանց կարծիքը և հնարավորություն տալ ինքնաարտահայտվելու: Նման բնավորություն ունեցող աշակերտները երբեմն նաև ագրեսիվ վարք են ցուցաբերում, որևէ պարագայում ուսուցիչը չպետք է նրանց խիստ վերաբերվի, կշտամբի և չպետք է այնպիսի իրավիճակ ստեղծի, որ այդ աշակերտն ավելի ճնշվի և հոգեբանորեն ընկճվի: Նման պարագայում կարևորվում է ուսուցչի հոգեբանական մտածողությունը, ինչու ոչ նաև հարկ եղած դեպքում գործընկերների հետ խորհրդակցումը: Կրտսեր դպրոցական տարիքում աշակերտին կոտրելը, սթրեսային վիճակի հասցնելը կարող է խորը հետք թողնել նրա ողջ կյանքի վրա:

Համաձայն Ա. Մասլոուի մշակած պահանջմունքների աստիճանակարգի, եթե չի ձևավորվում հաղորդակցման պահանջմունքը, եթե ճնշվում է ինքնադրսևորումը, և անձը չի կարողանում ինքնաբացահայտվել, ինքնահիրացվել հաղորդակցման մեջ, ապա կարող է արգելակվել անձի զարգացումը: Հաղորդակցական ակտիվությունը կապված է հաղորդակցման պահանջմունքի բավարարման հետ, և հաղորդակցական ակտիվության զարգացումը նպաստում է նաև հաղորդակցման պահանջմունքի փոխակերպման: Այսինքն՝ հաղորդակցական ակտիվությունը դառնում է ներքին հոգեվիճակ, գործունեության դրդապատճառ և անձնային որակ[3]:

Ակտիվ հաղորդակցությունը, կազմակերպված շփումը մեծ ազդեցություն է ունենում աշակերտի գաղափարապես զարգացման վրա, օգնում է նրան հեշտ ինտեգրվել հասարակության մեջ, անկաշկանդ շփվել տարբեր բնագավառների և տարիքի մարդկանց հետ և հասնել այն նպատակներին, որոնք ուրվագծել է իր համար: Այս ամենը կարող է ի կատար ածվել, եթե կրտսեր դպրոցական տարիքում դպրոցում ուսուցանումն իրականացվի ճիշտ և նպատակային մոդելով: Ուսուցչի դասերն անցկացնելու եղանակները, խոսքի արժևորումը, հաղորդակցման դերի կարևորումը միանշանակ կնպաստեն վերը նշված գործընթացների իրականցմանը: Ուստի պետք է մենք՝ ուսուցիչներս, չափազանց մեծ

[3] Ալեքսանյան Ա. Ս. Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում, Երևան 2015թ, 171-174 էջ

պատասխանատվությամբ վերաբերվենք մեր առաքելությանը, դաստիարկենք այնպիսի սերունդներ, որոնք կիզորացնեն մեր պետությունը և կնպաստեն ինչպես կրթության, այնպես էլ մնացած բնագավառների զարգացմանը:

ԳԼՈՒԽ 2. Մայրենի լեզվի դասընթացում խոսքի և հաղորդակցման միջոցների կիրառման առանձնահատկությունները

Խոսքը մարդկային հասարակության մեջ հաղորդակցման կարևորագույն գործոն է և ինքնահաստատման, սեփական եսը դրսևորելու, մտածողության, աշխարհընկալման կարողությունների զարգացման ամենաանհրաժեշտ միջոցը: Այդ է պատճառը, որ տարրական դասարաններում մայրենիին հատկացված ժամաքանակից, իբրև անհրաժեշտ բաղադրիչ շաբաթական ժամերից մեկը հատկացվում է աշակերտների խոսքային կարողությունների զարգացման խնդիրներին՝ բաղադրիչն անվանելով «Խոսք և հաղորդակցություն»:

Ուսման սկզբնական շրջանում երեխային գրավում է երևույթների միայն արտաքին կողմը, իսկ ուսուցչի դերը կայանում է նրանում, որ պարբերաբար սովորեցնի դիտողականությանը, երևույթների էության ըմբռնմանը, հասկացմանը և այլն [4] : Աշակերտները Մայրենի լեզվի դասաժամերին լեզվի հետ մեկտեղ յուրացնում են խոսքի մշակույթը, միմյանց հետ հաղորդակցվելու հմտությունները և ձևերը: Ուսուցչի կողմից այս ամենի ուսուցումը պետք է կատարվի ճիշտ և ժամանակակից մեթոդներով: Այդ մեթոդները պետք է հասանելի լինեն դասարանում սովորող բոլոր աշակերտների համար, հարկ եղած դեպքում բարդ և ինքնամփոփ աշակերտների հետ աշխատելիս ուցուցիչը պետք է մշակի և օգտագործի անհատական մեթոդներ:

Օրինակ՝ դասարանին բաժանի զույգերի և յուրաքանչյուրին հանձնարարի մտածել և ներկայացնել դիմացինի բնավորության գծերն ու խառնվածքը՝ ըստ իրենց պատկերացման: Աշակերտը պետք է խոսի դիմացինի բնավորության դրական և բացասական գծերի մասին, ներկայացնի նրա թույլ և ուժեղ կողմերը, այսինքն՝ տա տվյալ աշակերտի բնութագիրը: Այս մեթոդի միջոցով երեխաների մոտ կսկսի ձևավորվել

[4] Ասատրյան Զ. «Տարրական կրթություն մանկավարժություն» էջ 35

մտածելու ունակությունը, միտքն ավելի ճկուն կդառնա, նախադասություններն ավելի համակարգված, իսկ խոսքը՝ ավելի սահուն: Աշակերտները միմյանց ներկայացելիս կարող են նաև միջամտել օրինակ այն հարցերում, երբ կտեսնեն, որ տվյալ բնորոշումն իրենց մասին սխալ է, նրանք հնարավորություն կունենան հակառակ փաստեր բերելու, ինչու ոչ նաև փոքրիկ բանավեճի մեջ մտնելու: Այս մեթոդով աշակերտները կզարգացնեն քննադատական միտքը, ձեռք կբերեն ինքնավստահություն և կփորձեն առաջ տանել և արժևորել սեփական կարծիքը: Իհարկե, այս մեթոդն օգտակար կլինի այն դեպքում, երբ ուսուցիչը համակարգի այն, թույլ չտա, որպեսզի դասարանը վերածվի խառնաշփոթի և ժամանակին կանխի աշակերտների մեջ հնարավոր ընդհարումը:

Նշենք, որ նմանատիպ առաջադրանքները ձևավորում և զարգացնում են՝

. հաղորդակցվելու կարողությունը

. շփման խոսքային և ոչ խոսքային միջոցների տեղին օգտագործումը

. դիմացինին լսելու և նրա կարծիքի հետ հաշվի նստելու կարողությունը

. երևակայական և քննադատական մտքի զարգացումը:

Խոսքի զարգացման մի շարք մեթոդներ կան, որոնք մինչ այսօր կիրառելի են, օրինակ՝ աշակերտների համար գրքերի ընթերցում, տեսանյութերի ցուցադրում, զրույցի մեթոդով դասերի անցկացում, ինչպես նաև աշակերտների հետ ինտերակտիվ շփման հնարավորություն: Նման մեթոդներն օգնում են աշակերտների մոտ զարգացնել բառապաշարը, խոսքն ավելի կանոնակարգված դարձնել, իսկ դաընկերների և ուսուցչի հետ շփումը՝ ավելի անկաշկանդ:

Մայրենի լեզվի ուսուցումը պետք է սովորողին հնարավորություն տա՝

. անկաշկանդ և գրագետ, գրավոր և բանավոր արտահայտել սեփական մտքերը, զգացմունքները.

. կառուցել ճիշտ և փաստարկված խոսք.

. զարգացնել լեզվական-ստեղծագործական երևակայությունը:

Մայրենի լեզվի ժամերին բացի բանավոր խոսքի զարգացումը կարևոր է նաև գրավոր խոսքի զարգացումը: Բանավոր խոսքի համեմատ գրավոր խոսքն ավելի մեծ դժվարություններ կարող է առաջացնել, ուստի դեռ տարրական դասարաններից աշակերտները պետք է ուշադրությամբ և հմտորեն յուրացնեն տառերը, բառերը և կարողանան կապակցված և իմաստով նախադասություններ կազմել: Սակայն, միայն կապակցված խոսքի հմտությունների ուսուցումը չի կարող սպառել հարցի ողջ բազմազանությունը, քանի որ հանգեցնում է միայն աշակերտների տեքստերի վերաբերյալ արտահայտվելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Բառապաշարի հարստացման, աշակերտների խոսքի լեզվական-քերականական կառուցվածքի մշակմանը զուգահեռ հաճախ անտեսվում են կյանքի տարբեր իրավիճակներում լեզվի հաղորդակցական գործառույթները և աշակերտների բարեկիրթ խոսքի մշակույթի ձևավորման խնդիրները: Այս ամենը պետք է ձևավորվի հատուկ <<խոսքային>> դասերի ընթացքում: Այս ժամերի արդյունավետ կազմակերպումը կնպաստի հաջողությամբ իրականացնել լեզվի ուսուցման հաղորդակցական և գործառութային մոտեցումը և կնպաստի աշակերտների խոսքի արդյունավետ զարգացմանը:

Կրտսեր դպրոցում մայրենի լեզվի խնդիրը խոսքային հմտությունների, կարդալու կարողությունների զարգացումն է: Իսկ սովորողը կարդում ու գրում է անընդհատ, բոլոր դասաժամերին: Այստեղ ևս մեկ անգամ ընդգծվում է մայրենիի անընդհատ ուսուցումը, գրագետ բանավոր և գրավոր խոսքի կառուցումը: Աշակերտը պետք է կարողանա միտքն ավելի գեղեցիկ, պատկերավոր և հասկանալի ներկայացնել, սեփական կարծիքը հիմնավորել և պաշտպանել, դիմացինին լսել և հարցադրումներ անել:

Կարևոր է, որպեսզի երեխաների մոտ զարգանա նաև լեզվամտածողությունը, այսինքն՝ մայրենի լեզվի ճիշտ ուսուցման մեթոդով նպաստել, որպեսզի աշակերտի մոտ զարգանա մտածելու ունակությունը, մտքերի տրամաբանական հերթականությունը: Նախադասություններ կազմելիս, մտքերը շարադրելիս լեզվի լավ իմացությունը կարող է նպաստել, որպեսզի աշակերտն ավելի վստահորեն իր կարծիքն

արտահայտի, ավելի հեշտ շփվի իր հասակակիցների հետ և կարողանա հաղորդակցման հմտությունների տիրապետել:

Մայրենիի ուսուցման ընթացքում ուսուցիչները հաճախ լեզվի առանձնահատկություններին անդրադառնում են տեքստերի միջոցով՝ առակներ, հեքիաթներ, գրական-գեղարվեստական նյութեր և այլն: Սակայն լեզուն նախ և առաջ կենդանի հաղորդակցության միջոց է, ուստի շատ կարևոր է ուսումնական տեքստերին նաև հաղորդակցական ուղղվածություն տալ, ինչը մեծապես կնպաստի երեխայի խոսքի և հաղորդակցման կարողությունների զարգացմանը:

Օրինակ՝ շաբաթը մեկ անգամ ուսուցիչը կարող է հանձնարարել, որ այդ օրվա դասագրքի դասի փոխարեն աշակերտներն իրենց հետաքրքրող թեմա առաջարկեն և դրա հետ կապված պատմություն հորինեն: Այնուհետև յուրաքանչյուրը ներակայացնի իր պատմությունը, ծավալվի քննարկում, ուսուցիչը հարցեր ուղղի և դասի ավարտին գնահատի լավագույն պատմությունը: Այս կերպով աշակերտներին հնարավորություն կտրվի հնարավորինս լարել իրենց միտքը, մինչ այդ ժամանակ սովորած բառերն ու քաղած գիտելիքները կիրառել իրենց պատմության մեջ և ձգտել լավագույնս հանդես գալ և արժանանալ ուսուցչի գովասանքին: Այս մեթոդով կզարգանա նաև քննադատական միտքը, սեփական սխալներն ընդունելու կարողությունը և ուսուցչի նկատառումներից ելնելով՝ դրանց ուղղումը:

Շատ կարևոր է նաև ճիշտ խոսելու և հաղորդակցվելու կարողությունը: Հաղորդակցման հմտություններին տիրապետելը կյանքում հաջողության հասնելու ամենամեծ գրավականն է: Ազդու, գեղեցիկ, տպավորիչ խոսքը հզոր գործիք է բոլոր նրանց համար, ովքեր ուզում են հասարակության մեջ որոշակի դիրք գրավել, ներդաշնակ հաղորդակցվել մարդկանց հետ և միջավայրում երևալ որպես նպատակային, բանիմաց ու հետաքրքիր անձնավորություն: Հաղորդակցվելու շնորհքը մարդու մեծագույն հարստություններից մեկն է[5]:

[5] Ց. Ավետիսյան, «Հայոց լեզու և խոսքի մշակույթ», Երևան, 2016թ, 4 էջ

Կարող ենք փաստել, որ մանկավարժական հաղորդակցումն ուսուցիչ-աշակերտ համագործակցային փոխհարաբերությունների կազմակերպման և զարգացման, փոխմբռնման և փոխազդեցության բազմաբաղադրիչ գործընթաց է, որը բխում է նրանց համատեղ գործունեության նպատակներից: Մանկավարժական մասնագիտական մշակույթը ենթադրում է բազմապիսի հատկանիշներ, ինչպիսիք են սերը երեխայի նկատմամբ, նրանց հետ համագործակցելու կարողությունը, հաղորդակցման ժամանակ վերապրվող ուրախությունը, երեխաների հետաքրքրությունների հավատարիմ պաշտպանությունը, արդարամտությունն ու պարկեշտությունը[6]:

Ի վերջո կարող ենք եզրակացնել, որ Մայրենի լեզուն հենց այն հիմնաքարային առարկաներից մեկն է, որի ուսուցման ընթացքում ձևավորվում է աշակերտի միտքը, շփման և հաղորդակցման հմտությունները և ազատ ու անկաշկանդ արտահայտվելու հնարավորությունը: Բացի խոսքի ու հաղորդակցման զարգացումը, աշակերտների մեջ զարգանում են նաև սեփական լեզվին տիրապետելու հմտությունները և դրանց ճիշտ ու տեղին կիրառումն իրենց ողջ կյանքի ընթացքում:

[6] Հակոբյան Ն., Գևորգյան Ս. և ուրիշներ, Մանկավարժական հաղորդակցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, հեղինակային հրատարակություն, Երևան, 2010, 202, էջ 63-64

Եզրակացություն

Խոսքը և հաղորդակցումը յուրաքանչյուրի կյանքի կարևորագույն մասն են կազմում, քանի որ հնարավորություն են տալիս շփման մեջ մտնել դիմացինի հետ, արտահայտել մտքեր, փոխանակվել կարծիքներով և իրենց առջև ծառացած խնդիրներին լուծում տալ: Խոսքի և հաղորդակցման հմտություններն առավել զարգանում են դպրոցում և մասնավորապես Մայրենի լեզվի դասաժամերին: Ուսուցչի կողմից խոսքային հաղորդակցման լիարժեք ուղղորդումը կարող է նպաստել երեխաների և շրջապատի փոխահարաբերությունների ձևավորմանն ու զարգացմանը, նրանց անձնային որակների կատերալագործմանը:

Մայրենի լեզվի դասաժամերին կարևոր է ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների ընթացքը, որտեղ ուսուցիչը բացատրողի դերում է, իսկ աշակերտը՝ ընկալողի: Ուսուցչի կիրառած մեթոդները դասերի ընթացքում առավել հետաքրքիր են դարձնում ուսուցանվող նյութը, հնարավորություն են տալիս աշակերտներին ինքնադրսևորվելու, կարծիք արտահայտելու և դասի լիարժեք մասնակիցը դառնալու: Ինտերակտիվ դասերի անցկացումը, նոր և ժամանակակից մեթոդների կիրառումը ավելի է ոգևորում աշակերտներին՝ նպաստելով նոր գիտելիքներին ձեռքբերմանը: Մայրենի լեզվի դասերին ձևավորվում է ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքը: Երկուսն էլ հավասարպես կարևոր են, և երկուսի համատեղումը բերում է կապակցված և բովանդակալից խոսքի, մտքերի ճիշտ և համակարգված արտահայտմանը:

Այսպիսով կարող ենք նշել, որ կրտսեր դպրոցական տարիքում Մայրենի լեզվի դասաժամերին ստացած գիտելիքները նպաստում են խոսքի և հաղորդակցման զարգացմանը, ապահովում են անկաշկանդ և վստահ շփում հասարակության հետ և հետագայում նաև հարթում են կյանքի ճիշտ ճանապարհ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ալեքսանյան Ա. Ս. Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում, Երևան 2015թ, 171-174 էջ

2. Ասատրյան Զ. «Տարրական կրթություն մանկավարժություն» էջ 35

3. Ց. Ավետիսյան, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան, 2016թ, 4 էջ

4. Կարապետյան Վ.Ս. Գեվորգյան Մ.Ռ. Բերբերյան Ա.Ս. Պետրոսյա Ռ.Ս. Խաչատրյան Հ.Վ. «Կրթության հոգեբանության դասախոսությունների ժողովածու», էջ296-338

5. ՀՀ լեզվակրթության քաղաքականության ուրվագիծ…, 2008, էջ 48-49

6. Հակոբյան Ն., Գևորգյան Ս. և ուրիշներ, Մանկավարժական հաղորդակցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, հեղինակային հրատարակություն, Երևան, 2010, 202, էջ 63-64